«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝«Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Դաստիարակ՝ Սիմոնյան Մարիաննա

Մանկապարտեզ՝ « Զառիթափի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ

Բովանդակություն

Ներածություն....2
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ....3
ԳԼՈՒԽ 1....4
Ի՞նչ է հայրենասիրությունը....4
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ....5
Պետական դրոշ....5
Պետական զինանշան....6
Պետական օրհներգը....7
Գլուխ 2....8
Սաների հայրենաճանաչողության կարևորությունը....8
Պարապմունք 1....9
Պարապմունք 2....11
Ապլիկացիա....13
Ամփոփում....14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....15
Գրականություն....17

Ներածություն

Հայաստանը հայերի հայրենիքն է։ Դա նշանակում է, որ մենք այստեղ ենք ծնվել ու մեծացել։ Այստեղ են ծնվել նաև մեր նախնիները, մեր ծնողները, հարազատները, ընկերներն ու բարեկամները, շատ ու շատ ուրիշ մարդիկ։ Հայաստանը հայրենիքն է նաև միլիոնավոր հայերի, որոնք ապրում են հայրենիքից հեռու։

Հայաստանն իրենց հայրենիքն են համարում նաև այստեղ ապրող այլ ազգերի մարդիկ՝ եզդիներ, ռուսներ, ասորիներ, հույներ և ուրիշներ։

Հայաստանը մեր երկիրն է, մեր ընդհանուր տունը, և մենք սիրում, պաշտում ու հպարտանում ենք նրանով։ Այդ սերն ու նվիրվածությունը մենք արտահայտում ենք ոչ միայն խոսքով, այլ նաև գործով։

Հայրենիքի համար շատերն են հերոսական գործեր կատարել, հարկ եղած դեպքում իրենց կյանքը զոհել։

Սիրել հայրենիքը նշանակում է ճանաչել այն, գիտենալ նրա անցյալը, գնահատել մեր նախնիների ստեղծած ու մեզ փոխանցած անգնահատելի ժառանգությունը։ «Հայրենասիրությունը սկսվում է հայրենագիտությունից»,- սա հայ մեծ գրող Ռաֆֆու խոսքն է։

Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես

Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,

Իմ սրտի միջից թե սիրտս ճեղքես՝

Դրոշիդ բոցը պիտի հուրհրա։

Հովհաննես Շիրազ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ

Ժամանակակից մեթոդների, մեդիագրագիտության միջոցով նպաստել թեմայի արդյունավետության բարձրացմանը և սաներին թեման ավելի դյուրին մատուցմանը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Մեթոդների միջոցով բարձրացնել սաների հայրենաճանաչողության թեմայի կարևորության մակարդակը
2. Սաներին պատմել պատմամշակույթային վայրերի մասին
3. Կատարելագործել սաների խոսքի հնչյունային կուլտուրան, հասնել բառերի ու հնչյունների մաքուր արտաբերմանը, ընդարձակել ակտիվ բառապաշարը:
4. Զարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը, քննադատական մտածողությունը, երկխոսելու և մենախոսելու ունակությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ստուգել առաջարկված մեթոդների արդյունավետությունը պրակտի-կայում:
- Թեմայի վերաբերյալ կատարել գրական աղբյուրների հետազոտություն, այդ թվում նաև ինտերնետային կայքերի ուսումնասիրություն:
- Նպաստել խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիրակմանը:
- Հարստացնել և ակտիվացնել բառապաշարը:
- Զարգացնել կապակցված խոսքը:

ԳԼՈՒԽ 1

Ի՞նչ է հայրենասիրությունը

Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է որպես զգացմունք, որն ավելի ու ավելի է սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով: Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է:

Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք վարքի դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն: Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը հայրենիք սիրելն է: Իմ պատկերացմամբ սիրել նշանակում է պատրաստ լինել տալ իր կյանքը եթե դա անհրաժեշտ է: Օրինակ՝ հայրենասեր զինվորը կյանքում չի մատնի իր զորքին: Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար հոգ տանելն է, չաղտոտելն է:

Ե՞րբ է անհատի մոտ ձևավորվում հայրենիքի գիտակցումը: Ե՞րբ է մարդը հասկանում, որ այն տեղը, որտեղ ծնվել է, լոկ աշխարհագրական միավոր կամ սովորական քար ու թուփ չէ այս երկրագնդի համար:

Հայրենիքը հայերիս մեջ գալիս է օրորոցից, առաջին թոթովանքից ու «մամ» կանչելուց:

- Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմահ պահելն է։ ***Հովհաննես Իսակով***
- Հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մըն է, որ մարդ մոխիր կդարձնե։ ***Պետրոս Դուրյան***
- Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է։ ***Մենեկա կրտսեր***
- Մեր դժբախտությունն այն չէ, որ աշխարհում կան թուրքեր, այլ այն, որ կան թուրքանման հայեր։ ***Գարեգին Նժդեհ***
- Գոյություն ունի մի ուժ, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին՝ հոգով, մտքով և այրունով։ Դա ազգային սերն է։ Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող սիրել այն։ ***Ռաֆֆի***
- Իր հայրենիքը խայտառակել, նշանակում է դավաճանել այն։ ***Վիկտոր Հյուգո***
- Չկա ավելի խորը զգացում, քան հայրենասիրությունը։ ***Պարույր Սևակ***
- Սերը հայրենիքի հանդեպ կհաղթահարի ամեն ինչ։ ***Պուբլիոս Վերգիլիոս Մարո***
- Հայրենասիրությունն ամենախոր զգացմունքներից մեկն է՝ ամրացված դարերով ու հազարամյակներով։ ***Վլադիմիր Լենին***

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

Պետական դրոշ

Հայաստանի դրոշը Հայաստանի պետական խորհրդանիշներից մեկն : Կազմված է կարմիր, կապույտ և նարնջագույն գույներից, հորիզոնական հավասարաչափ շերտերով։

Նախագծողը Ստեփան Մալխասյանցն է, «ՀՀ դրոշի մասին» առաջին օրենքն ընդունել է ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թ-ի օգոստոսի 24-ին։

Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար։

Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի տակ։

Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը։

Արյունից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկված կտոր մի կապույտ,
Հասուն հասկերի շող նարնջագույն
Եվ դարերի հավատի դրոշ եռագույն։
Անդրանիկ Ծառուկյան

Պետական զինանշան

Հայաստանի առաջին հանրապետության զինանշանը Հայաստանի ժողովրդավարական Հանրապետության պետական խորհրդանիշներից մեկն է։

Հաստատվել է 1920թ-ի հուլիսին։ Հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Զինանշանը կազմված է հետևյալ տարրերից. վահանի կենտրոնում Արարատ լեռն է, որը հայ ազգի խորհրդանիշն է։ Լեռան գագաթին Նոյան տապանն է, քանի որ ավանդույթի համաձայն ջրհեղեղից հետո տապանը կանգ է առել հենց այդ լեռան վրա։

Վահանը բաժանված է 4 մասի, որոնք խորհրդանշում են Հայաստանի պատմության չորս անկախ հայկական թագավորությունները՝ Արտաշեսյանների, Բագրատունիների, Արշակունիների և Ռուբինյանների։

Առյուծն ու արծիվը, որոնք բռնում են վահանը, կենդանական աշխարհի թագավորներն են և խորհրդանշում են իմաստություն, հպարտություն, համբերություն և ազնվություն։Ներքևում պատկերված սուրը խորհրդանշում է հայ ժողովրդի պայքարը հանուն ազատության և անկախության, փետուրն ու հասկերը՝ հայ ժողովրդի ստեղծարար տաղանդը և խաղաղասիրությունը։

Դարեր շարունակ դրանք թագավորական ընտանիքների խորհրդանիշներն էին։

Պետական օրհներգը

Հայաստանի ազգային օրհներգը «Մեր հայրենիքն է»: Ընդունվել է 1991թ-ի հուլիսի

1-ին և հիմնված է Առաջին հանրապետության օրհներգի վրա՝ տեքստի չնչին փոփոխություններով։ Օրհներգի տեքստը վերցված է Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունից։Այն առաջին անգամ հնչել է 1885թ-ի մարտի 15-ին, որպես Թիֆլիսի «Արծրունի» թատրոնում կայացած հայ առաջին քառաձայն համերգի առաջին երգ։ Հետագայում այն մշակել է նաև Բարսեղ Կանաչյանը։ «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» օրենքն ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006թ-ի դեկտեմբերի 25-ին։

Օրհներգը հանդիսավոր երաժշտական կամ երաժշտա-պոետիկ աշխատություն է, որը կատարվում է սովորաբար հատուկ օրենքով նախատեսված պահերին, ամենից առաջ՝ պաշտոնական տոների ժամանակ, արարողություններին, ծեսերին։ Օրհներգի կատարման ժամանակ սովորաբար ընդունված է կանգնել և հանել գլխի ծածկոցը, ձեռքը դնել սրտին։

Գլուխ 2

Սաների հայրենաճանաչողության կարևորությունը

Մեր հայրենիքը նախ և առաջ դարերի անմահ պատմություն է՝ լցված կենաց պատերազմներով, հայրենի հողի հանդեպ սիրով և վերջում՝ խաղաղության ձգտմամբ։

Հայրենաճանաչողության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կեցվածքը։

Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։ Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի և դերի մասին։ Հենց այս պատճառով է, որ նախադպրոցական կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է լինի սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը։

Ես կարծում եմ, որ հայրենաճանաչողության ձևավորումը միջին խմբում արդյունավետ կլինի կազմակերպել էքսկուրսիաների միջոցով՝ այցելություններ դեպի Հայաստանի տեսարժան վայրեր։Դրանց միջոցով երեխաները կծանոթանան հայ մշակույթին, կիմանան դրա նշանակությունը հայ ազգի համար։

Պարապմունք 1

Թեմա՝ «Հայրիկներն ու պապիկները զինվորներ են»

Տեսակը՝ զրույց

Նպատակները՝

- Ճշտել երեխաների գիտելիքները Հայկական բանակի, հայրենիքի պաշտպանների՝ զինվորնորի մասին։
- Դաստիարակել հայրենասիրություն, հպարտություն, երախտագիտության զգացում և հարգանք զինվորի հանդեպ։
- Զարգացնել երեխաների ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, պարզ ընդարձակ և բարդ նախադասություններ կազմելու կարողությունը։
- Հարստացնել բառապաշարը զինվորական ծառայություն, նորակոչիկ, համազգեստ, մարտունակ և անպարտ բառերով։

Վերջնարդյունքները՝

- Կզարգանա երեխաների ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, կհարստանա բառապաշարը։
- Կդաստիրակվի երեխաների մեջ հայրենասիրություն, հպարտություն, երախտագիտության զգացում և հարգանք զինվորի մասին։
- Ձևակերպի և կիրառի իրավիճակային հարցեր հասակակիցների և մեցահասակների հետ հաղորդակցվելիս։
- Վերապատմի լսած պատմությունը՝ պահպանելով մայրենի լեզվի հնչյունների ճիշտ արտասանությունը և խոսքի քերականական կողմը։
- Պատմի անհավանական պատմություններ, որոնք կարող են լինել վառ երևակայության զարգացման արդյունք։

Անհրաժեշտ պարագաներ՝ հայկական բանակի տարբեր տեսակի զորքեր, զինվորական տեխնիկա՝ զրահանավեր, սուզանավեր,օդանավ, ուղղաթիռ,

տանկ, հրետանի պատկերող նկարներ և քարտեր, մեծ չափի 3 նկար, որ՝ ներկայացնում են դաշտ, ծով, երկինք։

Ընթացքը

Պարապմունքը սկսել եմ Վ. Վարդունու « Ես ֆիդայի եմ » բանաստեղծությամբ.

Ունեմ ձեռքի գնդացիր,

Պարսատիկ չէ , հասկացի՛ր...

Անդրանիկի թոռնիկն եմ,

Ոչի՛նչ, որ դեռ փոքրիկ եմ։

Ֆիդայի եմ, իմացի՛ր,

Դու էլ ինձ հետ միացի՛ր։

Մեր սահմանին ով ձեռք տա,

Կկրակեմ՝ տա՛...տա՛...տա՛...։

Խթանման փուլ

Բաց և փակ հարցերի միջոցով խթանել թեմայի նոր թեման՝

- Երեխանե՛ր, ձեր պապիկներին ու հայրիկները նույնպես ծառայել են բանակում,
- Ի՞նչ հետաքրքիր պատմություններ են նրանք պատմել

Իմաստի ընկալման փուլ

Այսօր մենք կխոսենք յուրահատուկ ծննդյան օրվա մասին, որը նշում է ողջ հայ ժողովուրդը։ Դա մեր բանակի ծննդյան օրն է՝Հունվարի 28-ը։Այդ օրը ստեղծվեց հայկական բանակը։ Այդ օրը քաղաքամայր Երևանում զորահանդես է տեղի ունենում։ Հրապարակ են դուրս գալիս հայկական բանակի զորքերը, զրահամեքենաները, տանկերը, հրթիռները, օդային զինված ուժերը։ Ողջ հայ ժողովուրդը մեծ ցնծությամբ է նշում այդ տոնը։

-Ի՞նչ եք հասկանում բանակ ասելով /մեր երկրի զինված ուժերն են/։

-Իսկ ինչու՞ է պետք մեզ բանակը /որպեսզի պաշտպանի թշնամուց. . . /:

-Ինչպիսի՞ն է հայոց բանակը /հզոր, ուժեղ, անպարտ,անվախ. . . /:

-Ովքեր են ծառայում կամ ծառայել հայոց բանակում /տղաները, հայրիկները, պապիկները...

-Ինչպե՞ս են անվանում նրանց /զինվորներ/։

-Ինչո՞վ են զբաղվում զինվորները բանակում /պաշտպանում են մեր երկրի սահմանները, կրակում են, մարզվում են/։

-Ինչպես են անվանում այն տղաներին, ովքեր նոր են սկսել ծառայությունը/նորակոչիկ/ ։

-Ինչպես է կոչվում զինվորականների հագուստը/զինվորական համազգեստ/։

Կշռադատման փուլ

Դիդակտիկ խաղ՝ Օդում, ջրում, ցամաքում

Երեխաներն ընտրում են քարտեր, որից հետո բաժանվում են խմբերի, քննարկում են, քարտերը տեղադրում են համապատասխան տեղերում։ Վերջում ներկայացնում են իրենց աշխատանքը։

Պարապմունք 2

Թեմա՝ «Իմ հայրենիքը Հայաստանն է»

Տեսակը՝ Ինտեգրված պարապմունք + ապլիկացիա

Նպատակները՝

- Ծանոթացնել երկրի դրոշին, զինանշանին, օրհներգին, Երևանի տեսարժան վայրերին, հուշարձաններին։

- Արթնացնել հայրենասիրական զգացումներ և ձևավորել այն գաղափարը, որ հայրենիքը մեկն է, ուստի չի կարելի այն լքել և հարկավոր է միշտ սիրել և պաշտպանել այն։
- Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ։

Վերջնարդյունքները

- Կծանոթանան երկրի դրոշին, զինանշանին, օրհներգին, Երևանի տեսարժան վայրերին և հուշարձաններին։
- Կզարգանա կապակցված խոսք կառուցելու հմտություններ։
- Կպահպանի մայրենի լեզվի հնչյունների ճիշտ արտասանությունը և խոսքի քերականական կողմը։

Կապը չափորոշիչների հետ՝

ԽՀ-ը, Ի-բ,գ, ՀՍԱ-գ,դ

Անհրաժեշտ պարագաներ՝ զինանշանի, դրոշի, Հայաստանի տեսարժան վայրերի, հուշարձանների նկարներ և հեռուստացույցով միացնել օրհներգը։

Ընթացքը

Խթանման փուլ

Պարապմունքը սկսել օրհներգ լսելով, որից հետո բաց և փակ հարցերի միջոցով խթանել նոր թեման։

-Ձեր կարծիքով ի՞նչ է սա /դրոշ, զինանշան/։

-Որտեղի՞ց է ձեզ ծանոթ այն /հեռուստացույց, պաստառներ/

Իմաստի ընկալում

Ցուցադրել դրոշը, զինանշանը, ծանոթացնել դրանց նշանակությանը, ընդգծել դրանց կարևորությունը։ Այնուհետև երեխաներն ընտրում են քարտեր, խմբերով

քննարկումներ անում, հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր ընտրած քարտի նշանակությունը։

Կշռադատման փուլ

Որը որին է պատկանում

Երեխաներին տրամադրել արծիվ, առյուծ, Արարատ լեռ, Նոյան տապան, կարմիր, կապույտ, նարնջագույն գույների կտրատված պատկերներ։ Երեխաները փորձում են պատկերները տեղադրել համապատասխան տեղերում։

Ապլիկացիա

Թեմա՝ Դրոշ

Նպատակները՝

- Ձևավորել մկրատը ճիշտ բռնելու և դրանից օգտվելու կարողություններ, ուսուցանել մկրատով ճիշտ կտրելու տեխնիկան, ձևաավորել թուղթը ուղիղ, կարճ ուղղանկյուններ կտրելու հմտություններ։
- Սովորեցնել սոսնձել փոքր դետալները հիմնական մասերին՝ ճիշտ հերթականությամբ։
- Սովորեցնել աշխատել կոկիկ և մաքուր։

Վերջնարդյունքները՝

- Կօգտագործի մկրատ, թղթից կտրի ուղիղ, կարճ ուղղանկյուններ։
- Աշխատի մաքուր և կոկիկ։

- Պատկերի ՀՀ դրոշը։

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, ալբոմի թղթեր և խոնավ անձեռոցիկներ։

Ընթացքը

Լսեցինք Արմեն Մարտիրոսյանի « Ես սիրում եմ իմ երկիրը » երգը։

Նախապես սեղաններին դրված են անհրաժեշտ բոլոր պարագաները և բնօրինակները՝ սեղանների քանակով։ Երեխաների մեծամասնությունը ինքնուրույն կտրատեց կարմիր, կապույտ, ծիրանագույն ուղղանկյուններ և բնօրինակին նայելով ճիշտ հերթականությամբ սոսնձեցին թղթին։ Աշխատեցին մաքուր, կոկիկ և բոլորի աշխատանքները ցուցադրվեցին։

Ամփոփում

Թեման ամփոփեցինք, կազմակերպելով միջոցառում նվիրված հայ զինվորին՝ «Հայ զինվոր, իմ սիրտը քո սրտի հետ է» խորագրով։ Դահլիճը ձևավորել էինք համապատասխան պարագաներով, երեխաների հագել էին զինվորական համազգեստ և իհարկե հրավիրվել էին զինվորականներ։ Երեխաները արտասանել, երգել և բեմականացրել էին փոքր պատումներ։ Զինվորականները շատ էին ուրախացել և երեխաների հետ հավասար երգեցին հայրենասիրական երգերը։ Միջոցառումից հետո զինվորականների հետ գնացինք Զառիթափի Եռաբլուր ծաղիկներ դրեցինք անմահ հերոսների գերեզմաներին։

Տնօրենի խոսք - Հայրենիքը սկսվում է սահմանից և նախադպրոցական տարիքի երեխաներից։ Պարապմունքը հնարավորություն տվեց երեխաների մեջ ձևավորել հստակ պատկերացումներ հայրենասիրության վերաբերյալ։ Երեխաները այսօր ապացուցեցին, որ մեր հերոսների արժանի զավակներն են։ Սաների հայրենաճանաչողության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, որի ուղղությամբ

դաստիարակի կողմից կատարվեց և իրականացվեց աշխատանքներ, որի արդյունքին այսօր ներկաներով ականատես եղանք։ Մեծ հույս ունեմ, որ այս գիտելիքները ձեզ հնարավորություն կտա գնահատել, սիրել և պաշտպանել հայրենիքը մինչև կյանքի վերջ։

Ավագ խմբի դաստիարակի խոսքը – Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին՝ ըստ որի անհրաժեշտ է երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի, հայկական բանակի ստեղծման մասին, դաստիարակել հպարտության զգացում, զարգացնել ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը,հարստացնել բառապաշարը, երեխաներին ցանոթացնել ՀՀ դրոշին, զինանշանին և օրհներգին։ Եվ, որ ամենակարևորն էր, երեխաները կարողացան պարապմունքի ընթացքում ստացած գիտելիքների շնորհիվ փոքրիկ պատմություններ ներկայացնել։ Որպես առաջարկություն կառաջարկեի պարապմունքի ավարտից հետո զբոսանք կազմակերպել և այցելել գյուղի մոտակա զորամաս՝ բանակի առօրյային ծանոթանալու և ամրապնդելու նպատակով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պարապմունքը համարում եմ կատարված, քանի որ կարողացա հասնել վերջնարդյունքներին։ Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է տարիքային խմբի ծրագրին։Պարապմունքը իրականացվել է ԽԻԿ համակարգով, պահպանվել է տևողությունը։Պարապմունքի ընթացքում բացահայտվեց երեխաների ոգում պատերազմի թողած հետքերը, հիշատակվեց մեր հերոսների անունները, նրանց կատարած սխրագործությունները, որն ավելի ոգևորեց մատաղ սերունդներին։

Գրականություն

1. Վ. Բրուտյանի «Հայրենասիրությունը որպես ազգային գաղափարախոսություն» հոդվածից։
2. Գևորգ Բրուտյանի ուսումնական բլոգից «Իմ հայրենասիրությունը»։
3. Սաթենիկ Արթենյան «Որտեղի՞ց է սկսվում հայրենիքը» հոդվածից։
4. 5-րդ դասարանի « Հայրենագիտություն» դասագրքից։
5. Համացանցի Վիքիպեդիա բաժնից։
6. Միջին խմբի «Խոսքի զարգացում» դասագրքից։